ASBAREZ ARMENIAN DAILY NEWSPAPER

100 Ասպարէզ

հայաշխարհի ասպարէզը

Ազգային Մտահոգութիւններ՝ Նոր Կարելիութիւնների Լոյսի Տակ

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ

«Հայկական Հանրագիտարան» վերակոչուած «Հայկական Սովետական Հանրագիտարան»ի գլխաւոր խմբագրութիւնը, յանձին Կոստանդին Խուդավերդեանի, առաջին պետական կազմակերպութիւններից էր, որ «Սովետական»ի ճնշող բեռը թօթափած, փորձում էր վերարժեւորել հայ ժողովրդի մօտիկ անցեալի պատմութիւնը: Խիզախ ձեռնարկութիւն էր 1991ին ռուսերէնով եւ 1993ին հայերէնով լոյս ընծայուած «Հայկական Հարց» հանրագիտարանի հրատարակութիւնը: Ժամանակն էր վերարժեւորել նաեւ հայկական սփիւռքը, առանց նախապաշարումների ու գաղափարական նկատառումների բացել նրա ծալքերը, տալ նրա իրական պատկերը: 1993ից ներքաշուեցի այդ հսկայ ծրագրի մէջ եւ մէկ տարի անց խմբագրութեանը ներկայացրի 86 էջանոց յօդուածս, որ պարփակում էր Քալիֆորնիոյ հայ համայնքի կառոյցը իր պատմութեամբ, կրօնական յարանուանութիւններով, կուսակցութիւններով, կազմակերպութիւններով, կրթական հաստատութիւններով, մամուլով ու այլ տեղեկատուական ճիւղաւորումներով: (I)

Տասնհինգ տարիներ են անցել այն օրուանից, երբ սկսեցի աշխատիլ ուսումնասիրել համայնքը, կարողանալ տալու լիակատար պատկերը՝ մղիչ ոյժ ստանալով այն գաղափարից, թէ իմ ուսումնասիրութիւնը հանրագիտարանի էջերի մէջ բանտուած չի մնայ, այն կը ծառայի նորանկախ Հայաստանին՝ ճանաչելու սփիւռքի մէկ կարեւոր հատուածը իր մտայնութեամբ, իր կարողութիւններով, կարելիութիւններով ու կարողականութեամբ (յաւակնոտ ու անհիմն ակնկալիք): Այսօր, տասնհինգ տարի յետոյ, դարձեալ թերթում եմ յօդուածս՝ միայն վերյիշելու համար, թէ ի՞նչ պատկեր էր ներկայացնում քալիֆորնիահայութիւնը ազգային, ընկերային, քաղաքական տեսանկիւնից: Ակնկալում էի համեմատական եզր քաղել՝ ներկան դատելու ու եզրակացութիւնների յանգելու համար: Զէ՞ որ այսօր նոր յոյսեր կան, նոր երազներ ենք փայփայում՝ սփիւռքի ներոյժը գնահատելու, եւ այն՝ ի խնդիր ամբողջական հայ ժողովրդի ապագային ի սպաս դնելու: Վերջապէս սփիւռք-Հայաստան բազմակողմանի եւ բազմաբնոյթ համագործակցութիւն ծաւալելու նոր ծրագիրներ են խմորուում:

Վերջին տասնհինգ տարիներում տեղի ունեցած փոփոխութիւնները արդարեւ մեծ են, անսպասելի եւ մտահոգիչ: Տեղն են եւ իրենց յարաճուն գործունէութիւնն են շարունակում վաղուց գոյութիւն ունեցող կուսակցութիւնները, կազմակերպութիւնները, կրթական հաստատութիւնները իրենց տեղեկատուական միջոցներով. աւելացել են, սակայն, մեծ թուով մշակութային, արուեստասիրական, մասնագիտական, բարեսիրական, նոյնիսկ հայրենակցական (այս անգամ ներկայ Հայաստանի տեղանուններին յղուող) փոքր ու մեծ խմբակցութիւններ ու միութիւններ: Կարելի է ասել՝ ապրում է եւ առողջ է քալիֆորնիահայութիւնը իբրեւ մարմին՝ իր ամուր ողնասիւնով: Բայց մի երկու-երեք հարիւր հազարի պահանջներից առաջացած այս մարմինը ինչպէ՞ս է դիմանում մէկ միլիոն խայտաբղէտ, տարբեր, երբեմն իրերամերժ, մշակոյթների, մտայնութեան, ազգային ու ապազգային գաղափարների ու նպատակների տէր զանգուածի պարզած նոր իրողութեան մէջ: Իրականութիւնն այն է, որ չի դիմանում, կքել է. իսկ նորաստեղծ ճիւղաւորումները միայն կենտրոնախոյս դերի մէջ են, կամ՝ լաւագոյն դէպքում կիսանկախ արբանեակներ են կազմում: Այս իրողութիւնը աւելի ու աւելի են շեշտաւորում թուով աճած մամուլն ու հեռուստատեսութեան ծրագիրները, որոնցից ոմանց տարածած մտքերը չգիտես ի՞նչ նպատակի են ծառայում, անձնական շահերի՞, թէ՞...

Ի խնդիր քալիֆորնիահայութեան ազգային շահերի իրագործման նոր ուղիների որոնման, իւրաքանչիւր հայի, եթէ մտածել եւ ազգային հարցերով մտահոգուել գիտի, պարտականութիւնն է անհատապէս կամ հաւաքականօրէն (II) ախտաճանաչում կատարել, իրողութիւնը վերլուծել, տարբերութիւններն ու տարաձայնութիւնները բացայայտել, օգտակարը — որ անշուշտ շատ է մեր համայնքում — վնասակարից զատել. իսկ դրա համար համայնքը, կամ աւելի ճիշտ՝ զանգուածը դասախմբերի բաժանել է պէտք: Ժամանակին, 1920-ական թուականներին, ամերիկահայութեան մեծամասնութեանը կարելի էր իր կուսակցական պատկանելիութեամբ կամ նախասիրութեամբ զատորոշել, որ աւելի ուշ հայաստանասէր եւ ո՛չ-հայաստանասէրների հատուածականութեան վերածուեց: Ապա եկեղեցական թեմերի բաժանումը եկաւ աւելի խորացնելու ճեղքուածքը: Հիմա աւելացել է տեղայնութիւնը՝ լիբանանահայ, իրաքահայ, պարսկահայ, հայաստանահայ, կամ ինչպէս Գեւորգ Էմինն է

⇨

Հ.Յ.Դ. Ահարոնեան Կոմիտէ

ասել, լուսնահայ ու աստղահայ: Խորքին մէջ տարբերութիւնները այնքան էլ շատ չեն, որքան չեշտաւորում է ի հետեւանս անհանդուրժողականութեան: Այնուամենայնիւ, այս վերլուծութեան փորձը իր նպատակին հասցնելու համար ճիշտ չեմ տեսնում տեղայնութիւնը հիմք ծառայեցնել: Իմ կարծիքով տեղային պատկանելիութեան սահմանները նախկին շեշտը չունեն. բաժանումը, եւ այս պարագայում ինչո՞ւ չէ՝ նաեւ անհաշիւ աճած գաղութի մէջ ստեղծուած դժուարութիւնները, այլ ազդակներով են պայմանաւորուած: Սկսենք թուե՞լ: Արեւմտահայ լեզու, Արեւելահայ լեզու, Հայաստանեան ուղղագրութիւն, դասական ուղղագրութիւն, կրթական ընդհանուր քաղաքականութեան բացակայութիւն, հայեցի դաստիարակութիւն սերմանող հաստատութիւնների խիստ անբաւարարութիւն, ազգային ընդհանուր հարցերի նկատմամբ տիրող կարծիքների բեւեռացում, օտար ամուսնութիւնների բազմապատկում, ձուլում, հայ կեանքից տակաւ հեռացող զանգուածներ: Ներկայ կառոյցները ի վիճակի չեն իրենց հովանաւորութեան ու հսկողութեան տակ պահելու հսկայ զանգուածը՝ այդպիսով դիւրացնելով ամերիկեան մշակոյթի ու մանաւանդ մտայնութեան ու աշխարհահայեացքի անխուսափելի գրոհը՝ քաշել տանելու, ի սպառ ձուլելու հայ զանգուածը մասնիկ առ մասնիկ:

Լուծում: Չեմ յաւակնում:

Գիտեմ, որ թուածս դժուարութիւնները պիտի կարենալ վերացնել գոյութիւն ունեցող կառոյցների, փոքր ու մեծ միութիւնների ու կազմակերպութիւնների համատեղ ջանքերով ու դեռ աւելին՝ միջոցներ խորհել հասնելու այդ կառոյցների մէջ ընդգրկուած հայերից անդին, ազգային սահմանների եզրերում տարուբերուողներին: Բայց ինչպէ՞ս:

Իրավիճակի բնութագրման եւ ախտաճանաչման փորձիս մէջ մինչեւ հիմա չյիշեցի անկախ Հայաստանի ազդակը: Իրականութեան մէջ այդ ազդակը իր մեծ դերն է ունեցել հոգեբանական իմաստով ու նաեւ իբրեւ կենդանի, չօշափելի ներշնչանք, մանաւանդ՝ որոշ չափով դարձի բերելու, հայութեամբ տոգորելու հեռացածին: Այսօր, եթէ ընդունում ենք որ սփիւռքի զօրացման, սփիւռք-հայրենիք միաձուլման ու ազգային ընդհանուր շահերին ի խնդիր ազգային ներոյժի համապարփակ զօրակոչի խնդիր ունենք, Հայաստանի ազդակը իր գործնական եւ ներգործական դերը պիտի ստանձնի: Ուզում եմ հաւատալ, որ Հ.Հ. Սփիւռքի նախարարութեան ստեղծումը ժամանակին էր ու անհրաժեշտ: Այդ նախարարութեան ապագայ գործելաձեւից է կախուած՝ թէ որքանո՛վ պիտի կարողանայ մօտեցնել Հայաստանը Սփիւռքին՝ մանաւանդ կամրջել — բայց ո՛չ անպայման նոյնացնել — մտածելակերպերն ու մօտեցումները ազգային հարցերի նկատմամբ՝ հէնց առաջին հերթին հայ-թրքական յարաբերութիւնների բնագաւառում՝ հերքելու եւ վանելու համար թրքական այն թէզը, թէ Հայաստանի հայու հետ դիւրին է լեզու գտնելը, իմա՝ զիջումներ կորզելը, անդրդուելին ու կարծր կեցուածքը սփիւռքինն է, որ խանգարում է հայ-թրքական յարաբերութիւնների բարելաւմանը: (III)

Բայց հայ-թրքական յարաբերութիւնները, իրենց բոլոր երեսներով ու ենթաթեքստերով, մեր ազգային միակ խնդիրը չէ, եւ ոչ էլ սփիւռք-հայրենիք մօտեցումը անհրաժեշտ դարձնող ու պայմանաւորող միակ բնագաւառը: Այսօրուայ նիւթի նեղ շրջագծում մնալով, կը ցանկանայի Հ.Հ. Սփիւռքի նախարարութեանը տեսնել քալիֆորնիահայութեանը աջակից՝ լուծելու համար այն հարցերը, վերեւում յիշուած, որոնցից մի մասը հէնց Հայաստանի հայութեան արտագաղթի արդիւնքում է առաջացել: Այդ հարցերից ոմանք կարելի է քալիֆորնիահայ կազմակերպութիւնների միատեղ համագործակցութեամբ եթէ ոչ լուծել, բայց գոնէ իրարհասկացողութեան գալ ու միջին ճամբան գտնել: Ո՞վ պիտի ի մի բերի այդ իրարամերժ, նոյնիսկ երբեմն ծիծաղելիօրէն իրար թշնամի կազմակերպութիւններին եթէ ոչ նորաստեղծ Հ.Հ. Սփիւռքի նախարարութիւնը: Մեր դեսպանատներն ու հիւպատոսութիւնները գիտեն ձեւը՝ համայնքը դրամահաւաքի նպատակով ի մի բերելու: «Հայաստան» հիմնադրամը տարին մէկ անգամ այդ աշխատանքում յաղթանակով է դուրս գալիս: Սա էլ մի նպատակ:

«Ասպարէզ»ի էջերում կարդացի Հ.Հ. Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանի առաջին մամլոյ ասուլիսը: Կարդացի մեծ հետաքրքրութեամբ եւ ոգեւորութեամբ, բայց խոստովանեմ նաեւ ակամայից հոգուս մէջ սողոսկեց թերահաւատութիւնը. նախ՝ անցեալի փորձառութիւնից ելնելով՝ որքա՞ն անաչառ, որքա՞ն անկողմնակալ կը լինեն դատումները, արժեւորումները, ծրագրաւորումները, գործելակերպն ու գործնական գետնի վրայ առնուած քայլերը: Ո՛չ, կասկածել պէտք չէ: Սփիւռքի Կապի Կոմիտէի օրերից մինչեւ այսօր շատ բան է փոխուել: Բայց յետոյ, ծրագիրներն ու առաջադրանքները հսկայածաւալ են ու երբեմն անիրականանալի թուացող: (IV) Պարսիկ ժողովուրդը խելօք խօսքեր շատ ունի, մէկն էլ

Թագուհի Քուշերեան - Եփրեմեան

Ազգային Մտահոգութիւններ...

այն է, որ եթէ հսկայ քար ես վերցնում, ուրեմն չես խփելու (սանդէ բոզորգ ալամաթէ նազադանէ — պարսկերէն իմացողների համար): Բայց չեմ ուզում քննադատել կամ թերահաւատ լինել: Մտածում եմ, որ նախարարը թուել է այն բոլոր խնդիրները, որոնք յուզում են սփիւռքահայութեանը ու պիտի ծրագրի՝ գործադրութեան դնելու բոլորն էլ մէկ առ մէկ: Այսպիսի հսկայ յանձնառութեան առջեւ գլուխ պիտի խոնարհել եւ համբերատար լինել: Իսկ մեզ, քալիֆորնիահայութեանս մնում է տարբեր միջոցներով, մամուլից մինչեւ հրապարակային քննարկում կամ ներկայացուցչական խորհրդաժողովներ, բնութագրել, ձեւակերպել, մէկ յայտարարի բերել մեր ազգային մտահոգութիւնները, եւ դրանց վերացման ճամբաների մէջ օգտագործել նաեւ ընձեռուած նոր կարելիութիւնները:

I. Կոստանդին Խուդավերդեանի մահուան պատճառով անտէրութեան մատնուած եւ տնտեսական ծանր ճնշումների ենթարկուած Հանրագիտարանի հրատարակչութիւնը յետաձգեց հատորի լոյս ընծայումը: Հատորը հրատարակուեց 2003ին. իսկ իմ յօդուածը երեւաց կտրատուած, միախառնուած այլ յօդուածների հետ եւ անցած ինն տարիների բերած փոփոխութիւններին կարօտ:

II. «Ասպարէզ»ի առաջադրած ներկայ բեմը դրուատելի նախաձեռնութիւն է եւ պատեհաժամ:

III. Այս թեզը ի հարկէ պակասաւոր է ու անհիմն պարզապէս այն իմաստով, որ թուրքը սփիւռքը չի ճանաչուում, նրան որպէս միատարր էութիւն է դասում. այնուամենայնիւ, այն գործածում է իր կողմը գրաւելու Հայաստանի հային ու սեպ խրելու հայութեան երկու հատուածների միջեւ:

IV. Առաջադրանքների մէջ նշուած էր համակարգչային ծրագրի մասին, որ հնարաւոր է դարձնում «Մեսրոպեան ուղղագրութիւնը փոխարինել արեւելահայերէնով, եւ հակառակը»: Յուսամ թէ սա պարզ անուշադրութեան սխալ է եւ Հայաստանում տիրող որոշ հասկացողութիւն կամ համոզում չի արտացոլում: Մեսրոպեան ուղղագրութիւնը կարելի է Հայաստանեան, չասելու համար Սովետական, ուղղագրութեան փոխել եւ ո՛չ արեւելահայերէնի՝ որ լեզու է (ո՛չ ուղղագրութիւն) եւ գոյութիւն է ունեցել եւ ունի այսօր Հայաստանի սովետականացումից առաջ, անկախ նրա վրայ Խ. Հայաստանում պարտադրուած նոր ուղղագրութիւնից: